ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԼՈՒԶ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Միջնադարի աստվածաբանական-փիլիսոփայական մտքում յուրօրինակ տեղ էր զբաղեցնում սոցիալ-փիլիսոփայական, քաղաքագիտական ու իրավագիտական բնույթի, այդ թվում հոգևոր ու աշխարհիկ իշխանության հարաբերակցությանը, իշխանության էությանն ու գործառույթներին, ինչպես նաև երկրի (պետության) կառավարմանն աղերսվող հարցերի քննարկումը: Արևմտաեվրոպական կրոնափիլիսոփայական մտքում հատկապես 13-14-րդ դդ. այս հարցերի աշխույժ քննարկումը պայմանավորված էր մի կողմից՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև առկա հակամարտություններով, մյուս կողմից՝ շրջանառության մեջ մտած արիստոտելյան ու արաբալեզու մտածողների բնազանցական ու քաղաքագիտական ուսմունքների և Հռոմի կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսության միջև հակասությունների սրմամբ: Ձևավորվել էր երկու հակոտնյա գաղափարական բանակ՝ աստվածաբանների մի խումբ (Էգիդի Հռոմեացի, Բոնիֆացիոս 8-րդ պապ, Թովմա Աքվինացի և այլք) պաշտպանում էր աշխարհիկ իշխանությունը եկեղեցուն ենթարկեցնելու տեսակետը, իսկ մյուս խումբը (Հովհան Փարիզեցի, Մարսիլիո Պադուացի, Ուիլյամ Օկկամ և այլք) փորձում էր հիմնավորել երկու իշխանությունների տարանջատման ու աշխարհիկ իշխանության անկախության ու ինքնուրույնության գաղափարը[1]:

Այս առումով բացառություն չէր 13-րդ դարի հայ աստվածաբանական-փիլիսոփայական միտքը, որի նշանավոր ներկայացուցիչները՝ Հովհաննես Պլուզ Երզնկացին և Վահրամ Ռաբունին, իշխանությանն ու կառավարմանն առնչվող հարցերի մասին գրել են հատուկ աշխատություններ: Սակայն, ի տարբերություն Արևմուտքի, մեզանում իշխանությանն ու կառավարմանը վերաբերող հարցերին անդրադառնալը պայմանավորված էր ոչ թե վերոնշյալ հանգամանքներով, այլ նախ և առաջ Կիլիկիայի հայկական պետության գոյությամբ և Հայաստանի որոշ տարածքներում հայկական իշխանությունների վերականգնմամբ: Թե՛ Ռաբունու և թե՛ Երզնկացու գլխավոր նպատակն այն էր, որ իրենց

[1] Այդ մասին տե՛ս, օրինակ՝ **Коплстон Ф. Ч**. История средневековой философии. М., 1997, էջք 352-378:

վերլուծություններով, խրատներով ու խորհուրդներով հարստացնեն իշխանության ու կառավարման վերաբերյալ հայ իշխանների գիտելիքները (որ այդ գիտելիքները նրանց համար լինեն «որպէս գաւազան ի ձեռին և որպէս ճրագ տեսողականին»), մատչելի ներկայացնեն իրավաքաղաքական ու սոցիալ-բարոյագիտական բնույթի տեսական դրույթների բովանդակությունը՝ դրանով իսկ ցանկանալով նրանց զերծ պահել իշխանություն ունեցողներին բնորոշ թերություններից: Այլ կերպ ասած, ինչպես Երզնկացին է գրում, հնարավորություն չունենալով զորքով և գանձերով շնորհավորել նրանց աստվածապարգև իշխանությունը, «բայց զի բանի գոլով սպասաւոր՝ բանիւ շնորհաւորեմ և օժանդակեմ և տամ օգնութիւն»[2]՝ այդպես նպաստելով հայկական իշխանությունների կայացմանն ու հզորացմանը:

Երզնկացու գրչին են պատկանում երկու՝ «Նորին Յոհաննէս վարդապետի ասացեալ ի բանն առաքելոյ, որ ասէ՝ ***Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ***, յաւուրն, յորում օրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլ մանկունք իշխանաց և այլք յարքունական սպասաւորացն» և «***Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի***» վերնագրերով աշխատությունները[3]: Հարկ է նշել, որ Երզնկացու երկերում տեսանելի է երկու անձ. մեկը՝ հոգևորական, վարդապետ, ում համար մարդու կեցության գերնպատակը հոգու փրկությունն է, իսկ միջոցը հնազանդությունն է աստվածային օրենքներին, հրաժարումը՝ երկրային արժեքներից (ով կարող է գրել. «Զգանձս աշխարհիս, զփառս երկրաւորս զամէնն ուրացի՛ր…»), հետևաբար՝ այս տեսանկյունից աշխարհիկ իշխանությունը սոսկ գործիք է դրան հասնելու համար: Իսկ մյուսը՝ իմաստասեր, իր ազգի ու հայրենիքի վիճակով մտահոգ հայրենասեր մտածող, հայոց արժեքների ջատագով (ով, դիմելով Քրիստոսին, կարող է գրել. «Շնորհե՛ա քրիստոնէից ուղիղ հաւատոյ դաւանութեամբ պայծառութիւն թագաւորաց, եւ իշխանաց զաւրութիւն, եւ ի պատերազմունս բարբարոսաց՝ յաղթութիւն, թշնամեաց խաչի քո՝ պարտութիւն… »[4]), ում համար աշխարհիկ իշխանությունը միջոց է հայոց թագավորության վերականգնման, հայոց ազգի վերա-

---

[2] **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Բնագրեր, Եր., 1977, էջ 205:

[3] Այս աշխատությունները գրելու տարեթվերի, շարժառիթների, կառուցվածքի ու բովանդակության մասին մանրամասն տե՛ս **Ա. Սրապյան,** Հովհաննես Երզնկացի, Եր., 1958, **նույնի՝** Հովհաննես Երզնկացի Պլուզ (կյանքը և գործը), Եր., 1993, **Է. Մ. Բաղդասարյան,** Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը: Երզնկացու փիլիսոփայական հայացքների վերլուծությունը տե՛ս **Գ. Հ. Գրիգորյան**, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Եր., 1962:

[4] «**Նորին Յոհաննիսի** արկեալ բան ինչ յարմարական ի ԾԹ սաղմոսն որ ասէ. «**Աստուած մերժեցեր զմեզ և աւերեցեր**…»», **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ: Բնագրերը հրատ. պատրաստեցին Ա. Երզնկացի-Տեր-Սրապյանը և Է. Բաղդասարյանը, Եր., 2013, էջ 106:

ծնության և ազգային ինքնության պահպանման համար: Երզնկացին ոչ թե շեշտում կամ սրում է այդ երկու անձերի միջև առկա կամ հնարավոր տեսական ու գործնական տարբերություններն ու հակասությունները, այլ ընդհակառակը՝ իր բնավորության և աշխարհատեսության ոգուն համապատասխան, ձգտում է հաշտության եզրեր գտնել դրանց միջև ու ապահովել «միասնական անձի» ներդաշնակությունը: Դա գրեթե միշտ նրան հաջողվում է, որովհետև նա թե՛ տեսության մեջ և թե՛ գործնական կյանքում առաջնորդվում էր արդարության սկզբունքով, այսինքն՝ հավասարակշռություն էր փնտրում հակադիր կողմերի՝ աշխարհիկի և հոգևորի, աստվածայինի և մարդկայինի, հոգու և մարմնի, բանականության ու զգայությունների, իշխողների և ենթարկվողների, տարբեր կրոնների ու դավանանքների հետևորդների միջև:

Երզնկացու վերոհիշյալ երկու աշխատությունների միջև կան թե՛ տարբերություններ և թե՛ ընդհանրություններ՝ առաջին հերթին պայմանավորված մատուցման ձևով (մեկը նամակ է, թուղթ, մյուսը՝ ճառ, ելույթ, քարոզ), ժամանակով ու տեղով (կախված լսարանի կազմից՝ մի դեպքում ավելի շատ խոսվում է թագավորի, իսկ մյուս դեպքում՝ իշխանների իրավունքների ու պարտականությունների մասին), հանգամանքներով և վերջապես՝ հետապնդած նպատակներով: Օրինակ, եթե «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ» աշխատությունը կառուցված է «հարցադրումներ-պատասխաններ» սկզբունքով (ընդսմին, այդ հարցադրումները հաճախ բնազանցական-փիլիսոփայական բնույթ ունեն), ապա «Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի» երկը շարադրված է ավելի ազատ ու պարզ ոճով, և տեսական հարցադրումների կողքին մեծ տեղ են գրավում բարոյախրատական ու մարդաբանական բնույթի դատողությունները: Եթե առաջինում հաճախակի մեջբերումներ են արվում Աստվածաշնչից, հատկապես Հին Կտակարանից, ապա երկրորդում կա ընդամենը մեկ ուղղակի մեջբերում Սաղմոսից, որը հազվագյուտ երևույթ է միջնադարյան նմանատիպ տեքստի համար:

Այդ երկերի միջև եղած բազում ընդհանրություններից առանձնացնեմ երկուսը: Առաջին՝ երկու աշխատություններում էլ Երզնկացին ընդհանուր առմամբ քննարկում է հետևյալ հարցերը. **իշխանության ու կառավարման մասին ի՞նչ պետք է իմանան թագավորներն ու իշխանները, ինչպիսի՞ն պետք լինի նրանց բարոյական նկարագիրը, և ինչպե՞ս պետք է կառավարեն երկիրը**: Երկրորդ՝ դրանցում Երզնկացին խուսափում է այնպիսի հարցերի քննարկումից, որոնք գործնականում (հատկապես Կիլիկիայի հայկական պետությունում) որոշակի լուծում են ստացել (օրինակ՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցության, պետության կառավարման մեխանիզմների կամ գործակալությունների և այլ հարցեր), ուստի ուշադրությունն ավելի շատ բևեռում է իշխանության (կառավարման) բարոյաիրավական ու մար-

դաբանական կողմերին: Այսպես, Երզնկացին երկու իշխանությունների՝ աշխարհիկ և հոգևոր, հարաբերակցության հարցին մանրամասն չի անդրադառնում, որովհետև նախ՝ Կիլիկիայի հայկական պետությունում եկեղեցին ենթակա վիճակում էր, և հոգևորականներն անհրաժեշտության դեպքում ստիպված էին լինում կատարելու իշխանության պահանջները (օրինակ՝ կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժը (1193-1194) փորձում էր վարել ինքնուրույն քաղաքականություն՝ չհնազանդվելով Լևոն II Մեծագործին: Վերջինս ձերբակալում ու բանտարկում է հանդունգն կաթողիկոսին, որն էլ բանտում կնքում է իր մահկանացուն (պաշտոնապես հայտարարվում է, որ կաթողիկոսը մահացել է (քարավեժ է եղել) բանտից փախչելու ժամանակ): Մի այլ օրինակ. հայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին (1293-1307), լինելով միարարական, բայց և այնպես ամբողջությամբ չկատարեց եկեղեցիների միավորման վերաբերյալ Հեթում թագավորահոր և Լևոն Դ-ի պահանջները, ուստի գահընկեց արվեց և աքսորվեց, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն): Երկրորդ, Երզնկացին ոչ միայն հակասություն չի տեսնում երկու իշխանությունների նպատակների միջև, այլև, ընդհակառակը, կարծում է, որ դրանք իրար փոխլրացնում են:

Առհասարակ, հավատարիմ միջնադարյան իմաստասիրման ոճին, Երզնկացին իշխանության ու կառավարման խնդրին առնչվող հարցերի քննարկումը շաղկապում է բնազանցական-գոյաբանական, աստվածաբանական, մարդաբանական ու բարոյագիտական հարցադրումների հետ, նախ և առաջ դրանց համատեքստում փորձում գտնել լուծումներ: Այդ հարցերից առաջինը բնականաբար վերաբերում է իշխանությանը. ի՞նչ է իշխանությունը, ո՞րն է դրա ակունքը, որո՞նք են իշխանության տեսակները, ի՞նչ հարաբերության մեջ են երկնային ու երկրային, հոգևոր և աշխարհիկ իշխանությունները, ինչո՞վ են իրարից տարբերվում Աստծո կամոք տրված, աստվածատուր, բարի և ինքնահոչակ, չար իշխանությունները և այլն:

Իշխանության էությունը, բնույթն ու գործառույթները: Երզնկացու կարծիքով, իշխանությունը մի հարաբերություն է, որում մեկը իշխում է, մյուսը՝ իշխվում, մեկը կառավարում է, մյուսը՝ կառավարվում: Սա տիեզերքում և արարչակարգում գործող աստվածային կարգ է: Այդ իշխանական հարաբերությունները գոյի մակարդակում դրսևորվում են երեք ձևով. ա) մեկը միմիայն իշխում է. դա տիեզերքի Արարիչն է, «թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի», բ) մյուսը իշխում է և միաժամանակ գտնվում իշխանության տակ. դա մարդն է, գ) երրորդը՝ կենդանիները, միայն գտնվում են իշխանության տակ: Ըստ այդմ՝ իշխանությունը լինում է երեք կարգի՝ **տիրական** կամ աստվածային, **դրական** կամ մարդկային և **բնական** կամ կենդանական[5]: Իշխանությունը կոչվում է

[5] Տե՛ս **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 148:

տիրական, որովհետև Աստված մեր Տերն է, Արարիչը, Նախախնամողը, ով մարդուն շնորհել է դրական իշխանություն, այսինքն՝ իշխելու արարված գոյերի (բույսեր, ձկներ, կենդանիներ և այլն) վրա: Իսկ կենդանիների իշխանությունը կոչվում է բնական, որովհետև տրված է ի վերուստ, ի բնե, այսինքն՝ դա իրենց բնության անկապտելի մասն է: Օրինակ՝ առյուծը իշխում է գազանների, իսկ արծիվը՝ թռչունների վրա:

Այսպիսով, ելնելով աստվածակենտրոնության ու միաստվածության հիմնադրույթներից, Երզնկացին կարծում է, որ իշխանության աղբյուրը, ակունքը Աստված է, ով տիեզերքն ստեղծել է զարմանահրաշ ու իմաստուն կերպով. «Իմաստ սքանչելի. զի ո՛չ խառնակ ինչ եւ շփոթեալ եթող զարարածս, այլ կա՛րգ եդ ամենայնի եւ դաս եւ սահման ամենայն գոյից, եւ որոշումն զանազանութեան, որպէսզի կարգն ուսուցէ մեզ զվերինն եւ զներքինն, զմիջինն եւ զամենայն ետեղական կարգաւորութիւնս»[6]: Այլ խոսքով՝ արարված տիեզերքը կարգավորված, դասավորված, աստիճանակարգված, սահմանագծված ու տարբերակված գոյերի ներդաշնակ ամբողջություն է, որը ոչ միայն բացառում է անիշխանությունը (քաոսը), այլև ներթափանցված է իշխանական՝ կարգավորված, բանականորեն ըմբռնելի հարաբերություններով: Երկրային թագավորությունն աստիճանակարգված է և երկնային թագավորության (քահանայապետության) նմանակն է: Համենայն դեպս, Երզնկացու կարծիքով, «բարէպաշտ եւ աստուածասէր թագաւորք քրիստոնէից» ձգտում են իրենց թագավորությունները կառուցել «ի տիպ եւ ի նմանութիւն արքայարանին վերին»:

Ընդունելով, որ երկրային իշխանության աղբյուրն Աստծուց է, Երզնկացին բախվում է աստվածարդարացման խնդրին, այսինքն՝ ինչպե՞ս համատեղել չարիքի, տվյալ դեպքում չար թագավորների և բարի Աստծո միաժամանակ գոյությունը: Նա դիմում է «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ» դատողության հեղինակ Պողոս առաքյալին («Զի՞նչ խաւսիս, ո՞վ աստուածային Առաքեալ, մի՞թէ ամենայն իշխան յԱստուծոյ ձեռնադրի…»), եթե ամեն մի իշխանություն Աստծուց է, ամեն մի իշխան ձեռնադրվում է Աստծո կողմից, ապա ինչպե՞ս հասկանալ ու բացատրել այն դեպքերը, երբ «բազումք անիրաւութեամբ, յափշտակութեամբ, զրկանաւք եւ յափշտակելով ընբռնեալ ունին զիշխանութիւնս»: Արդյոք ամենատես Աստված պատասխանատո՞ւ չէ նման դեպքերի, իշխողների չար արարքների, բռնությունների ու հանցագործությունների համար: Վերջապես, փոխանակ չարագործներին պատժելու, ինչո՞ւ է Աստված չար մարդկանց դարձնում թագավոր կամ իշխան, ո՞րն է դրա խորհուրդը: Այս հարցերին պատասխանելու համար Երզնկացին բերում է մի քանի փաս-

[6] Նույն տեղում:

տարկներ, որոնք, ըստ էության, տեղավորվում են միջնադարում տարածված աստվածարդարացման ընդհանուր տեսության շրջանակներում: Հասարակության մեջ չարիքի գոյության պատճառը Աստծու կողմից մարդկանց շնորհված ունակություններն ու կարգավիճակն է. հասարակությունը բաղկացած է անձնիշխան ու բանական էակներից, ովքեր ազատ են իրենց ընտրության մեջ, այսինքն՝ տվյալ դեպքում կարող են հնազանդվել կամ չհնազանդվել աստվածային կարգին ու պատվիրաններին, ովքեր, սակայն, դրանով հանդերձ, թե՛ երկրային և թե՛ հանդերձյալ կյանքում անձնապես պատասխանատու են իրենց բոլոր արարքների ու գործողությունների համար: Եթե ասվում է, որ ամեն մի իշխանություն Աստծուց է, ապա դա չի նշանակում, որ ամեն դեպքում Աստված անմիջականորեն միջամտում է մարդկանց գործերին: Չարի գոյությունը միանշանակ պայմանավորված է մարդկային գործոնով. դրա երևան գալը կախված է մարդու բնությունից (մարմնի խառնվածքից), չար հրահանգներից և անուսումությունից ու անգրագիտությունից[7]: Երզնկացին կրոնական մտածողության շրջանակներում պաշտպանում է «ցանկացած իշխանություն գերադասելի է անիշխանությունից» դրույթը՝ օգտագործելով չարի գոյության նպատակահարմարության մասին փաստարկը: Աստված երբեմն նախընտրում է չարի իշխանությունը անիշխանությունից, որովհետև «**անիշխանութիւն ամենայն ուրեք չար է եւ պատճառք՝ ո՛չ փրկութեան**»[8] (ընդգծ. իմն է - Ս. Զ.): Եթե Երզնկացին անիշխանությունը համարում է փրկության խափանման պատճառ, ապա 17-րդ դարում Թոմաս Հոբսը, սարսափած Անգլիայում ծավալված քաղաքացիական պատերազմի ծանր հետևանքներից, անիշխանությունը դիտում է որպես պետության կործանման պատճառներից մեկը և գերագույն (բացարձակ) իշխանությունը միանշանակ գերադասում է անիշխանությունից՝ կարծելով, որ «ոչ այնքան գերագույն իշխանությունն է մահացու, որքան դրա բացակայությունը»[9]:

Երզնկացու կարծիքով, աստվածային նախախնամությունը համապարփակ ու համընդհանուր է, ուստի նախախնամության տակ են գտնվում թե՛ բարի և թե՛ չար իշխանները: Չար մարդկանց Աստված իշխանություն է տալիս, քանզի ինքը բարի էություն ունի և անարժանին ևս բարեգործություն է անում, որպեսզի վերջինս հասկանա աստվածային բարության իմաստն ու խորհուրդը: Դրանով իսկ Աստված չար իշխանին ընտելացնում է բարուն, ինչպես օրինակ՝ մանկանը խաղալիք նվիրելով՝ նրան սովորեցնում են մերձենալ նվիրողին, այդպես էլ ում ըղձալի է երկրավոր մեծությունն ու աշխարհիկ փարթամությունը,

---

[7] Տե՛ս **Հովհաննես Երզնկացի**, Խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից ու ժողովրդոց…, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 152:

[8] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 153:

[9] **Гоббс Т**. Сочинения в двух томах. Т. 2. М., 1991, с. 142.

Աստված նրան տալիս է իշխանություն, որպեսզի այդ մարդը երախտագիտությամբ իր հայացքն ուղղի առ Աստված, դարձի գա և իր գործողություններում առաջնորդվի աստվածային պատվիրաններով: Այնուհետև, չար մարդկանց իշխանություն տալով՝ Աստված ցանկանում է խրատել մյուսներին, որպեսզի նրանք «զսուտ մեծութիւն ճշմարիտ» չհամարեն: Աստված չար մարդուն հնարավորություն է տալիս մեկ բարի գործ անելու՝ «իւր մեծութիւն յայս կեանքս և զիւր բարին վճարէ, որ յայն կեանքն չունենայ այլ ակն բարոյ»: Վերջապես, Աստված չար մարդկանց իշխանություն է տալիս նաև այն պատճառով, որ Ահեղ դատաստանի օրը նրանք չարդարանան՝ ասելով, թե «մեր ձեռը ի՞նչ էիր տվել, որ կարողանայինք բարիք գործել»:

Աստվածարդարացման այս փաստարկներից հետո Երզնկացին ստիպված է պատասխանել նաև հետևյալ հարցին. եթե աշխարհում իշխանությունն Աստծուց է, բայց կան նաև իշխանությունը զավթելու, իրեն թագավոր կամ իշխան ինքնահռչակելու դեպքեր, կան բարի ու չար թագավորներ, ապա ինչպե՞ս իմանալ, թե դրանցից ո՞վ է Աստծո կողմից ձեռնադրվել, ո՞վ է աստվածադիրը և ո՞վ՝ ինքնահռչակ արկածախնդիրը: Այս հարցին պատասխանելու համար Երզնկացին փորձում է բերել մի քանի չափանիշներ՝ դրանք կախման մեջ չդնելով ենթակայական գործոններից (թագավոր, իշխան, եկեղեցու առաջնորդներ): Օրինակ՝ Թովմա Աքվինացին նման պարագայում իշխանության աստվածատուր լինել-չլինելու, ինչպես նաև թագավորի գործողությունների գնահատման հարցի վերջնական լուծումը վերապահում էր եկեղեցուն: Նրա կարծիքով, քանի որ հասարակության նպատակն է առաքինի կյանքի միջոցով հասնել երկնային երանության, իսկ դա Հռոմի պապի գլխավորությամբ հոգևոր իշխանության խնդիրն է, հետևաբար «քրիստոնեական աշխարհի բոլոր թագավորները պետք է ենթարկվեն Հռոմի պապին, ինչպես հենց իրեն՝ Տեր Հիսուս Քրիստոսին: Չէ՞ որ նրանք, ում խնդիրն է հոգ տանել ընթացիկ երկրային նպատակների մասին, պետք է ենթարկվեն նրանց, ովքեր մտածում են վերջնական նպատակի մասին՝ ընդունելով նրանց իշխանությունը»[10]:

Իշխանությունն աստվածատուր է, կարծում է Երզնկացին, եթե թագավորը կամ իշխանը գիտեն Աստծո կամքը և պահպանում են աստվածային օրենքները: Իսկ Աստծո կամքն է՝ բարին, հաճելին և կատարյալը, որոնք իրար հետ փոխկապված են: Եթե թագավորը կառավարում է՝ անտեսելով աստվածային օրենքները, ապա նա «միայն լոկ զիշխանական պատիւն ունի առանց գործոյ՝ յԱստուծոյ է, զի նորա

[10] **Фома Аквинский.** О правлении государей // “Политические структуры эпохи феодализма в Западной Европе VI-XVII вв.” Л., 1990, с. 242, տե՛ս նաև **Copleston F. C.** Aquinas. An introduction to the life and work of the great medieval thinker. London, 1955, էջք 240-242:

կամք է իշխան լինելն, բայց զի ո՛չ պահէ զհրամանս աւրինացն եւ ոչ այլոց դաստիարակէ, ո՛չ է բարի եւ ո՛չ հաճոյ, վասն որոյ եւ ո՛չ կատարեալ»[11]: Եթե իշխանը պահում է Աստծու հրամանները, ապա դա բավարար պայման է աստվածադիր կոչվելու համար, սակայն անհրաժեշտ է, որ նրա իշխանության տակ գտնվողները նույնպես պահեն աստվածային օրենքները, այսինքն՝ դա պետք է համատարած, համապետական բնույթ ունենա: Երզնկացին «օրենք» հասկացությունը գործածում է լայն իմաստով՝ տարբերակելով մտքի, մարմնի անդամների, մեղքի, հոգու ու մարմնի հարաբերակցության, հոգու մասերի (բանական, ցասմնական, ցանկական) օրենքներ, ընդսմին՝ այդ բոլոր օրենքները արտածելով աստվածային օրենքներից: Այս տեսանկյունից Երզնկացին կարևորում է նաև երկրի բնակիչների վերաբերմունքը իշխանի նկատմամբ՝ դա դիտելով որպես աստվածընտրյալության չափանիշ. եթե երկրի բնակիչները հավանում են իշխանին, պաշտպանում նրա գործողությունները, ապա ուրեմն նա աստվածադիր իշխան է:

Ենթարկվել ու հնազանդվել իշխանին նշանակում է նախ և առաջ հնազանդվել աստվածային հրամաններին, որովհետև իշխան-իշխվող հարաբերությունն ունի աստվածային ծագում[12]: Հնազանդությունը շահավետ է թե՛ իշխանների և թե՛ ենթարկվողների համար, ընդսմին՝ իշխանների համար երկու իմաստով՝ ա) նրա դիրքը ցույց է տալիս այն պատիվն ու փառքը, որ նա ունի համազգակիցների շրջանում, բ) նրան սովորեցնում է թագավորական (կառավարչական) գործը, թե ինչպես իմաստուն կերպով ղեկավարել, ինչպես վերաբերվել հնազանդյալներին՝ հաշվի առնելով նրանց շահերն ու պահանջմունքները: Երզնկացին չի դիտարկում այն հարցը, թե բնակչության կողմից չընդունվելու կամ մերժվելու պարագայում ինչպիսի վերաբերմունք պիտի ցուցաբերվի թագավորի կամ իշխանի հանդեպ: Իր քարոզներում նա երկրի բնակիչներին հորդորում է սիրել իրենց տերերին և հնազանդ լինել նրանց՝ դրանում տեսնելով աստվածային օրենքներին նվիրվածության, երկրի շենության, ընդհանուրի բարօրության ու տարբեր սոցիալական խավերի ու ազգերի համերաշխ ապրելու գրավականը. «Երկու իրաւք քաղաքն շէն լինի. յորժամ քաղաքացիքն իւրեանց իշխանացն հնազանդ

---

[11] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 154:

[12] Վերլուծելով Գրիգոր Տաթևացու տեսակետը իշխանության ծագման ու գործառության, ի մասնավորի սոցիալական ներդաշնակության, աստվածատուր իշխանության ու հնազանդության հարաբերակցության վերաբերյալ՝ Վ. Միրզոյանը նկատում է, որ տվյալ դեպքում «ոչ թե կառավարումն է իշխանության գործառույթը, այլ, ընդհակառակը, ***իշխողները իշխում են, քանի որ իրենց գրված դիրքով նրանք պարտավոր են կառավարել***: Հետևությունն այն է, որ ծառաների ենթարկումը տերերին ոչ թե տերերի բռնությունն է, այլ բնական մի կարգ, որ երկուստեք օգտակար է և ապահովում է հասարակական կյանքի բնականոն գործառությունը» (**Վ. Ա. Միրզոյան**, Կառավարման փիլիսոփայություն, 3-րդ՝ լրացված ու բարեփոխված հրատ., Եր., 2010, էջ 228):

լինին, և իշխանքն՝ Աստուծոյ աւրինացն»[13]:

Կրթության, դպրության ու գիտության ջատագով[14] Երզնկացին չէր կարող աստվածընտրյալ թագավորի առաջնագույն նշաններից չհամարել իմաստությունը՝ բառիս ամենալայն իմաստով: Իմաստություն ասելով Երզնկացին նկատի ունի աշխարհիկ և հոգևոր, արտաքին ու ներքին, տեսական ու գործնական գիտելիքների, բանականության ու բարոյականության համադրությունը: Աստծու կողմից ձեռնադրված է այն թագավորը, ով «մաքուր եւ աննենգ իմաստութեանն է նախանձաւոր», ում դրա համար պաշտում են ոչ միայն իմաստունները, այլև բոլորը՝ նրան պատվելով որպես աստվածային իշխան կամ թագավոր և թագավորաց քաջ: Կյանքն առանց իմաստության ոչ այլ ինչ է, եթե ոչ «անբանութիւն անասնական»: Իմաստությունը մարդու հոգու զարդն է, բարձրագույն առաքինություններից մեկը: Ինչպես սեղանն առանց հացի անօգուտ է, գրում է Երզնկացին, այնպես էլ մարդու մեծությունն ու հարստությունը՝ առանց իմաստության: Այս կյանքում իմաստուն մարդիկ ունեն ինքնաիրականանալու բազում հնարավորություններ, կատարելագործվելու հեռանկարներ ու ակնկալիքներ. «Եւ վասն զի, ամենայն ոք, որ ունի իմաստութիւն, նայ կարէ տէր լինել իրաց և յիշխանութիւն ելանել, իմաստութեամբ ի մեղաց հեռանալ և իմաստութեամբ զբարին գործել և արքայութեան արժանի լինել և իմաստութեամբ զԱստուած իմանալ, և զպատուիրանն պահել»[15]:

Շարունակելով շարադրել աստվածադիր իշխանի ճանաչման օբյեկտիվ չափանիշները՝ Երզնկացին կարծում է, որ աստվածադիր իշխանին Աստված փառավորում է երեք բանով՝ գեղեցիկ դեմքով, խոսքով և անվամբ: Այդպիսի իշխանի դեմքը ահարկու ու պատկառելի է, խոսքը՝ զորավոր ու խելամիտ, անունը՝ լսողների համար պատվաբեր ու հեղինակավոր: Այդպիսի իշխանը, սուրբ կյանք վարելով, փառավորում է իր երեսը, ճշմարիտ ու ուղիղ խոսքով՝ միտքը դարձնում պատվելի, իսկ գիտությամբ ու իմաստությամբ, իրավամբ ու արդարությամբ կառավարելով՝ անունը համբավավոր ու փառավոր: Աստվածադիր իշխանին հպատակները սիրում են և հնազանդվում երեք կերպ՝ բնությամբ, անհրաժեշտությամբ և հոժարությամբ. բնությամբ՝ որպես զավակն է սիրում ծնողին, անհրաժեշտությամբ՝ քանզի նա աստվածադիր է, հոժարությամբ՝ որպես արդարադատ և բարեպաշտ իշխան:

---

[13] **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 217:

[14] Այդ մասին տե՛ս **Ս. Պարսումեան-Տատոյեան,** Յովհաննէս Պլուզ Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը եւ իմաստասիրական արձակը իսլամական աղբիւրներուն լոյսին տակ, Պէյրութ, 1991, **Ս. Ա. Զաքարյան,** Հայ իմաստասերներ (Վահրամ Բաբունի, Հովհաննես Պլուզ Երզնկացի), Եր., 1997, էջ 68-75:

[15] **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 218:

Աստվածադիր թագավոր կամ իշխան լինելու նշաններից մեկն էլ այն է, որ թագավորը պարտադիր պետք է տիրապետի կառավարման արվեստի գաղտնիքներին: Կառավարումն ավելի բարդ արվեստ է, քան մյուս արվեստները կամ մասնագիտությունները: Ինչպես օրինակ՝ նավաստի, բժիշկ և երաժիշտ չեն կարող կոչվել նրանք, ովքեր «ոչ են հմուտ այնոցիկ գիտութեան արուեստից», այնպես էլ աստվածադիր իշխողներ չեն կարող լինել նրանք, ովքեր բանիմաց չեն, հստակ ու համակողմանի պատկերացում չունեն իրենց գործի մասին, այսինքն՝ տվյալ դեպքում տեղյակ չեն մարդկանց հոգսերի ու կարիքների մասին, չունեն կազմակերպչական բնատուր տվյալներ, չգիտեն «զթագաւորական եւ զիշխանական սահման եւ զգործ». «Այսպէս արուեստ իմն է բնական եւ իշխանութիւնն, եւ որ անգէտն է եւ անտեղեակ պիտոյիցն մարդկան, տգէտ համարելի է եւ գեղջուկ, բայց թագաւոր՝ միայն զհմուտ եւ զտեղեակն մարդկային օգտութեանց»[16]: Սովորաբար մարդիկ նրանց են համարում իրենց տեր ու տիրակալ, գրում է Երզնկացին, ովքեր հարուստ են, ունեն մեծ ունեցվածք («առաւե՛լ ունին զապականելի նիւթս»), մինչդեռ Աստծո համար պատվական է և ստուգապես աստվածադիր է այն մարդը, ով «**զհոգի մաքուր ունի եւ միտս ազատս եւ անծառայելի**»[17] (ընդգծ. իմն է – Ս. Զ.): Վերջապես, Երզնկացին կարծում է, որ մարդկանց կողմից ձեռնադրված թագավորները անհաստատ են և անցավոր, ենթակա վայրիվերումների, իսկ Աստծո կողմից ձեռնադրվածները հաստատուն են և մնացական:

Այս օբյեկտիվ չափանիշների թվարկումից պարզ երևում է, որ թեև Երզնկացին եկեղեցու վերահսկողությունը աշխարհիկ իշխանությունների նկատմամբ բացառում է, այնուհանդերձ դրանք ուղղակի կախման մեջ է դնում Աստծո կամքից և աստվածային օրենքներից ու պատվիրաններից (հակառակ դեպքում դրանք չեն լինի աստվածադիր), այսինքն՝ գերբնականը տարրալուծում է բնականի, աշխարհիկի մեջ, դրանով իսկ ապահովում մարդկային կեցության նպատակի միասնությունը: Պետության (թագավորի) խնդիրը մարդու երկրային, կենսական պահանջմունքների բավարարումն է, սակայն դա չի նշանակում, թե այն պետք է մոռանա մարդու բարձրագույն՝ հոգևոր պահանջմունքների մասին: Աստված լավ մարդուն տալիս է մեծություն, այսինքն՝ ընտրում է թագավոր, որպեսզի նա հոր պես տեր կանգնի բոլորին, այդ թվում կարիքավորներին ու անտերներին, կարողանա շենացնել երկիրը և դրանով իսկ «**այս կենաւքս զայն կեանքն շահի**»[18] (ընդգծ. իմն է – Ս. Զ.):

Աստված, գրում է Երզնկացին, իշխանություն տալիս է, սակայն դա պահելն ու զորացնելը կախված են իշխողներից, նրանց կառավար-

---

[16] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ.Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 156:

[17] Նույն տեղում:

[18] **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 213:

ման հմտությունից ու կարողությունից, վարք ու բարքից: Այս առումով իշխանությունն ու կառավարումն իրարից տարբերվում են: Իշխանություն ստանալը մի բան է, իսկ այդ իշխանությունը պահելը՝ բոլորովին այլ բան: Իշխանություն ստացողների համար դա յուրատեսակ փորձություն է: Եթե Աստված տեսնում է, որ իշխողներն իր տված պարգևը չեն գնահատում ու չեն գոհանում իրենց կարգավիճակից կամ տարբեր պատճառներով չեն կարողանում կառավարել, ետ է վերցնում այդ պարգևը՝ նրանց մատնելով բախտի քմահաճույքին: Այսպես, Նա Ադամին հանեց դրախտից, հրեաներին՝ Երուսաղեմից, քահանայությունը վերցրեց Հեղեայի տնից և այլն: Դժբախտաբար պատժվածների այդ «սև ցուցակում» են հայտնվել նաև հայերը, որոնց մեղքերի համար Աստված զրկեց թագավորությունից. «Այսպէս և Հայոց ետ մեծ իշխանութիւն և զաւրաւոր թագաւորութիւն և, յորժամ ոչ կացին յաւրէնս հրամանացն Աստուծոյ և ոչ լսեցին սուրբ և իմաստուն առաջնորդացն և եղեն անիրաւք և նեղիչք երկրի, էհան Աստուած յիշխանութենէն և զրկեաց ի բարի առաջնորդացն, և մատնեցաք մեք աւար ազգաց սպանողաց, գերողաց և դառն զրկողաց»[19]: Այսպիսով, իշխանատեր հայերը գործել են առնվազն երեք մեղք՝ ա) չեն պահպանել աստվածային օրենքները, բ) չեն լսել իմաստուն առաջնորդներին, գ) երկիրը կառավարել են անիրավությամբ ու անարդարությամբ՝ բազում նեղություններ պատճառելով բնակիչներին: Միջնադարյան հայ պատմափիլիսոփայական ու աստվածաբանական մտածողության մեջ (Արիստակես Լաստիվերցի, Ներսես Շնորհալի) տարածված «մեղքի տեսությանը» համահունչ է Երզնկացին բացատրում հայոց իշխանազրկության փաստը: Սակայն տվյալ դեպքում նա փաստարկները բերում է ոչ թե Լաստիվերցու պես ողբալու[20], այլ հայոց իշխաններին հույս ու լավատեսություն ներշնչելու համար, որ դա եղել է անցյալում, իսկ հիմա Աստված կարծես թե փոխել է իր վերաբերմունքը հայոց նկատմամբ, ուստի եկել է ժամանակը (դրա վկայությունն է Կիլիկիայի հայոց թագավորության ու հայկական իշխանությունների վերականգնումը) շտկելու պատմական սխալները:

Կառավարողների բարոյական նկարագիրը: Միջնադարյան մտա-

---

[19] Նույն տեղում, էջ 205-206:

[20] Թեև Արիստակես Լաստիվերցին իր «Պատմությունն» սկսում և ավարտում է ողբասացությամբ, այնուհանդերձ նա կարծում է, որ միայն ողբով հնարավոր չէ ստեղծված ծանր վիճակից դուրս գալ. «Ահա այս հասկանալով՝ պետք է աշխատենք մեր արդարությամբ հաշտեցնել Աստծուն. եթե այս կատարվի, ապա և՛ թշնամիների սուրը իսպառ կանհետանա, և՛ դժվարը մեզ հեշտի կփոխվի, և՛ առապարները՝ հարթ ճանապարհի, և՛ ամեն մարդ կտեսնի Աստծու փրկությունը: Որովհետև, եթե Աստված մեր կողմը լինի, էլ ո՞ կկարողանա մեր դեմ դուրս գալ. Չէ՞ որ հենց ինքն է օրենքների մեջ հրամայել. «Քո թշնամիներին թշնամի կլինեմ և քեզ ատողներին կոչնչացնեմ» [Հմմտ. Բ. Օրէնք ԼԲ. 41-42, Սաղմ. ԺԷ.41] և դարձյալ՝ «Քեզ չեմ թողնի և վայր չեմ գցի»» [Եբր. ԺԳ. 5-6], **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, Եր., 1971, էջ 69:

ծողների նման Երզնկացին կարծում է, որ երկրի կառավարման գործում վճռորոշ նշանակություն ունի իշխանավորների բարոյական նկարագիրը: Կառավարողի խառնվածքը, բնավորության գծերը, կենսակերպը, վարքն ու բարքը, այլոց նկատմամբ վերաբերմունքի ձևերը իրենց կնիքն են դնում կառավարման բովանդակության վրա: Ելնելով արժեքաաշխարհայացքային առումով մարմնի նկատմամբ հոգու գերազանցության սկզբունքից՝ Երզնկացին կարծում է, որ իշխանի նկարագրում հոգևոր, ներքին բարեմասնությունները պետք է գերակայեն մարմնական, արտաքին հատկությունների նկատմամբ: Աշխարհում չորս բան կա, գրում է նա, որ մարդուն պատիվ է բերում՝ դեմքի գեղեցկությունը, զորությունը (ուժը), հարստությունը և մտքի իմաստությունը: Գեղեցկությունը, զորությունը և հարստությունը թուր են մարդու ձեռքին. կարող են կա՛մ իրեն սպանել (եթե գեղեցկությունը շաղախվի մեղքով, զորությունը՝ չար գործերով և հարստությունը՝ անիրավություններով), կա՛մ իր չարակամներին (եթե գեղեցկությունը չշաղախվի մեղքով, զորությունը գործածվի բարի գործերի համար և հարստությունը՝ իրավամբ վայելությամբ): Գեղեցկությունը, զորությունը և հարստությունը անցավոր են, իսկ իմաստությունը՝ անանց: Քաջածանոթ լինելով կառավարողների վարք ու բարքին, իրենց իշխանությունը չարաշահելու հակումներին՝ Երզնկացին իշխաններին խորհուրդ է տալիս հեռու մնալ այնպիսի մեղքերից, ինչպիսիք են ստախոսությունը, մեծամտությունը, ամբարտավանությունը, ագահությունը, որկրամոլությունը, վաշխառությունն ու կաշառակերությունը, հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերի և սովորույթների ոտնահարումը: Իշխանը պետք է լինի բարի, գթասիրտ, առատաձեռն, արդար, մեծահոգի, խոնարհ, համեստ, ճշմարտախոս, պետք է կարողանա քաղցրությամբ վերաբերվել բոլորին: Իշխանը պետք է նմանվի մաքրագույն ոսկու և արծաթի, այսինքն՝ «սուրբ եւ անխառն մնալ ի ժանկոյ եւ յաղտոյ յամենայն իրս եւ յամենայն ժամանակս»: Օրինակ՝ իշխանին վայել չէ գինեմոլ, հարբեցող լինել, որովհետև գինին թուլացնում է մարդու ոչ միայն զգոնությունը, նրան դարձնում ծույլ, մոռացկոտ, անզգամ, այլև մղում անպատվաբեր քայլերի: Հարբած մարդը նման է ծովում խորտակվող նավի, որն իր հետ հատակ է տանում եղած բարիքները:

Իշխանը ոչ միայն կառավարիչ է, այլև ժողովրդի առաջնորդը կյանքի տարբեր, այդ թվում բարոյականության ոլորտներում, ժողովրդին ուղղություն տվողն ու իր հետևից տանողը: Հետևաբար նրանից է մեծապես կախված հասարակության բարոյահոգեբանական վիճակը, մարդկանց միջև գոյություն ունեցող միջանձնային ու սոցիալական հարաբերությունների բնույթը: Ընդ որում, որքան մեծ է թագավորի իշխանությունը, այնքան մեծ է բարոյական սայթաքման ու անկման հնարավորությունը: Նա հեղինակություն է, գտնվում է համայնի տեսադաշտում,

հետևաբար նրա յուրաքանչյուր արարք անմիջապես տեսագրվում ու գնահատվում է բոլորի կողմից: Որպես կանոն, վատ արարքն ավելի շուտ է իմացվում, տարածվում ու ընդօրինակվում և ավելի շատ քննարկվում, դառնում բամբասանքի առարկա, քան լավը. «…իշխանացն որքան բարձրութիւնն եւ արժանաւորութիւնն է, այնքան եւ վտանգն, եւ որքան բազմութեան իշխա՛ն է, պա՛րտ է այնքան աչս ունել տեսանողս եւ ունկն՝ ի լսել, զի մի՛ վրիպեսցի յիրաւանց: Եւ որքան իշխանութիւնն է յոլովից, այնքան եւ չարն տարածեալ լինի, զի ոչ ասր զներկուածն եւ ոչ անուշահոտ ինչ եւ կամ գարշահոտ ազդէ այնքան յընդունակսն, եւ ոչ ժանտախտ ի տարածումն ի մարդիկ, որքան դիւրին եւ հեշտաբարն տարածեալ փոխի չարն յիշխանացն առ իշխեցեալսն»[21]: Ուստի իշխանի մի անխոհեմ քայլ, մի անբարո արարք կարող է արատավորել նրա բարի անունը, սև բիծ թողնել նրա հեղինակության վրա և ստվերել նրա կատարած բազմաթիվ բարի գործեր: Ինչպես օրինակ՝ «սակաւ աւշինդր՝ զբազում մեղր դառնացուցանէ, եւ մեղր յոլով զսակաւ աւշինդր ո՛չ քաղցրացուցանէ. այսպէս փոքր ինչ տեսակ մեղաց յիշխանացն զամենայն ժողովուրդսն խմորեալ պղծէ: Իսկ ի բազում առաքինութենէն սակաւ ինչ ընդունին»[22]: Իշխանի բարոյական նկարագրի համար Երզնկացին սահմանում է իմացական որոշակի չափանիշներ: Այսպես, իշխանական դիրքը չչարաշահելու, չգոռոզանալու ու չմեծամտանալու, անիրավ արարքներ չգործելու համար իշխանը նախ պետք է իմանա «զչափ անձին զիւրն և զայնոցիկ որոց իշխանն է»: Չափը իմանալ[23] նշանակում է իմանալ ինչպես սեփական կարգավիճակից բխող իր իրավունքներն ու պարտականությունները, իր՝ որպես անձնավորության առավելություններն ու թերությունները, այնպես էլ իր և մյուս մարդկանց միջև գոյություն ունեցող ընդհանրություններն ու տարբերությունները: Բոլոր մարդիկ, թեև նրանցից մեկն իշխում է, իսկ մյուսը՝ իշխվում, մեկը հրամայում է, իսկ մյուսը՝ ենթարկվում, նույն հողից են ստեղծվել, ստացել նույն ժառանգությունը, և Աստծո Որդին՝ Քրիստոսը, տանջվել, խաչվել, մեռել ու հարություն է առել բոլորի համար: Իշխանը որպես մարդ ոչ մի առավելություն չունի մյուսների հանդեպ՝ բացի ի վերուստ տրված իշխանությունից: Երկրորդ՝ իշխանը

[21] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ.Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 164:

[22] Նույն տեղում:

[23] Միջնադարյան նշանավոր տոմարագետ Հակոբ Ղրիմեցին (1360-1426), որը, ի դեպ, սովորել է Երզնկայի դպրոցում, հետևյալ կերպ է մեկնաբանում «չափ» հասկացության նշանակությունը. Աստված «չափ եդ ամենայն իրի, զի խրատ և ի վարդապետութիւն մեզ լիցի, զի և մէք զամենայն ինչ ըստ չափի ներգործեսցուք, եթէ ի գործնական առաքինութիւնս՝ մի առաւել քան զկարն մեր ձեռնարկեսցուք, զի Աստուած ի կարէն պահանջէ: Եւ եթէ ի տեսական հանճարասիրութիւնս՝ մի արտաքոյ քան զքանոն իմաստասիրաց և վարդապետացն քննեսցուք» (**Հակոբ Ղրիմեցի**, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Ջ. Ա. Էյնաթյանի, Եր., 1987, էջ 300):

պետք է իմանա, որ ինքը մահկանացու է, իսկ իր իշխանությունը՝ ժամանակավոր, և ամենակարևորը, որ «ինքն ընդ իշխանութեամբ Աստուծոյ է», որ այս կյանքը նման է անիվի. այսօր գտնվում ես վերևում, վաղը կհայտնվես ներքևում: Այս իմացությունները պետք է զսպեն իշխանին, տիրական ու դրական օրենքներին համապատասխան կարգավորեն նրա վարքը, փոխեն նրա վերաբերմունքը ծառայակիցների ու հասարակ ժողովրդի նկատմամբ:

Կառավարման սկզբունքները: Իր աշխատություններում Երզնկացին հատուկ ուշադրություն է դարձնում կառավարման խնդրին, պատասխանում «Ինչպե՞ս պետք է կառավարել երկիրը» հարցադրմանը: Նա ձևակերպում է երկրի կառավարմանը վերաբերող մի քանի դրույթներ, որոնք կարելի է խմբավորել մեկ ընդհանրական սկզբունքի մեջ՝ **երկիրը պետք է կառավարվի իմաստուն կերպով, այսինքն՝ իշխանները պետք է լինեն իմաստուն**: Իմաստուն կերպով կառավարել նախ և առաջ նշանակում է հետևել աստվածային օրենքներին, ըմբռնել արարչագործության իմաստը, հնազանդվել աստվածադիր կարգերին՝ հոգով դեպի վեր՝ աստվածային աշխարհը բարձրանալու նպատակով, և ոչ թե իջնել վար՝ դեպի նյութական, անբան ու անասնական աշխարհը: Երզնկացին որպես խրատ իմաստության, որպես լապտեր ճանապարհի մատնանշում է մարդու արարման խորհուրդը. «Թանձր մսով մարմնոյ զարիւնն է բռնել, և արիւնովն զշունչն է բռնել, ու շնչովն զհոգին է բռնել և հոգովն՝ զմիտքն: Այսոք ընդ իրար շարել են և միաւորել՝ միտքն ի վեր Աստուած և մարմինն ի վայր յերկրիս: Յորժամ միտքն յԱստուած հայի և հետ Աստուծոյ հրամանացն երթայ, զհոգին և զշունչն և զարիւնն և զմարմինն հետ իւր տանի և երկնաւոր առնէ, թէպէտ մարմնովն յերկիրս լինի, բայց մտաւքն և հոգւովն յերկինս է: Ապա թէ մարմնովն հետ երկրիս երթայ, նա զմարմինն, զարիւնն և զշունչն և զհոգին և զմիտքն յերկիր քարշէ և լինի երկրաւոր, որպէս անասուն: …Մարդ որ իմաստուն է, վասն անցաւոր կենացս չանկանի յերկնիցն ի վայր երկիր և լինի նման անասնոցն»[24]: Հետևաբար իմաստուն է այն կառավարիչը, ով մարդուն բարձրացնում է վեր՝ դեպի աստվածային աշխարհ, և ոչ թե իջեցնում ներքև՝ հասցնելով անասունների մակարդակին:

Երզնկացին անչափ բարձր է գնահատում իմաստության դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Իմաստությունը թանկ է բազում գանձերից և այս կյանքում, որը պատերազմ է, հուսալի ու անփոխարինելի զենք. «Ի կռուոյ ժամանակ երկաթ լաւ է, քան զոսկին. նոյնպէս յայս կեանքս, որ պատերազմ է, խելքն ու իմաստութիւնն լաւ է, քան զգանձս բազում»[25]: Միջնադարի պայմաններում Երզնկացին չափազանց մեծ

---

[24] **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխատ., էջ 211:

[25] Նույն տեղում, էջ 217:

տեղ է տալիս կրթվածությանը, բանիմացությանն ու իմաստությանը՝ կարծելով, որ դրանք իրենց գործառույթներով ու նշանակությամբ ոչ թե խանգարում կամ մրցակցում են հավատքի հետ, այլ, ընդհակառակը, ավելի են ամրապնդում այն: Իմաստությունն ազգի ու հավատքի պահպանման գրավականներից է, ուստի իշխանները պետք է մտածեն իրենց երկրում այնպիսի պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու մասին, որոնք կնպաստեն կրթության ու գիտության զարգացմանը: Այսօր էլ՝ գիտելիքահենք հասարակության կառուցման շեմին, նյութական ռեսուրսներից գրեթե զուրկ Հայոց պետության համար արդիական է հնչում իշխանավորներին միջնադարյան մտածողի ներկայացրած պահանջը. «Ի քո երկիրդ ուսման տեղ սահմանէ և դպրատուն, զի ուսումն և գիտութիւնն զհաւատքն հաստատուն պահէ և զազգն՝ իմաստուն»[26]:

Իմաստուն կառավարման պայմաններից է նաև թագավորներին կից խորհրդականների և իմաստունների առկայությունը: Խորհրդակցելու անհրաժեշտությունը բխում է այն բանից, որ մարդն իր բնությամբ տկար ու մահկանացու էակ է: Քանի որ Աստված մարդուն ստեղծել է «ոչ ինքնաբաւարար, այլ խրատատուի եւ խորհրդակցի կարօտ», ուստի իշխանը պարտավոր է իմաստուն խորհրդականների օգնությամբ կառավարել երկիրը: Երզնկացին առհասարակ կարծում է, որ կառավարման գործում անչափ կարևոր է մարդկանց (մասնագետների) ճիշտ ընտրությունը: Այս հարցում նույնպես Երզնկացին պահանջում է կիրառել առարկայական չափանիշներ: Պետք է ընտրել հաշվի առնելով տվյալ մարդու գործնական ու բարոյական արժանիքները, այլ ոչ թե նրա քսակի ծանրությունը կամ սոցիալական ծագումը: Օրինակ՝ ոչ թե այն ձին պիտի գովել, գրում է Երզնկացին, որի թամբն ու սարքը կարված են ոսկե թելերով, այլ՝ որը ազնիվ ու քաջասիրտ է, այնպես էլ ոչ թե շատ ոսկի և արծաթ ունեցող մարդուն պիտի ընտրել, այլ նրան, ով աստվածապաշտ է, օրինապաշտ ու առաքինի: Նմանապես՝ «Զցորենն ոչ թէ ի գեղեցիկ արտէ ընտրեն, այլ զայն, որ լաւ հաց լինի: Նոյնպէս և զայն մարդն պիտի սիրել, որ ինքն բնութեամբն լաւ լինի, և գործքն՝ բարի, և ո՛չ զայն, որ մեծազգի է, և գործքն՝ վատ»[27]: Ճիշտ ընտրություն կատարելուց հետո թագավորը կառավարման ընթացքում պետք է պատվի ու մեծարի բարեպաշտ, առաքինի, իրեն հավատարիմ, ճշմարտասեր, իր սխալները մատնանշող, իր գործը արդարությամբ կատարող մարդկանց և ընդհակառակը՝ պետք է խուսափի կեղծավորներից, շողոքորթներից ու երեսպաշտներից, պետք է «արհամարհէ չարագործն. եւ ո՛չ հաղորդի թէպէտ եւ մեծ ոք է»: Երզնկացին առիթը բաց չի թող-

[26] Նույն տեղում, էջ 208:
[27] Նույն տեղում, էջ 218:

նում ընդգծելու այն միտքը, որ եթե իշխանավորները չարագործներին (մատնիչներին, զրկողներին, անիրավներին) սիրեն ու տեղ տան, ապա հասարակությանը կհասցնեն առնվազն երկու վնաս. նախ՝ չար մարդիկ չեն զղջա իրենց արածների համար, այսինքն՝ չեն ենթարկվի իշխանությանը, երկրորդ՝ չարը կընդօրինակվի, և «այլք զնոյն չարն և զանիրաւութիւն գործեն, և փոքր մի խմորն զամենայն զանգուածն խմորէ»:

Իմաստուն կերպով կառավարել նշանակում է առնվազն լուծել երկու խնդիր. երկիրը շենացնել, բավարարել բնակիչների նյութական ու հոգևոր պահանջմունքները, ստեղծել օրենքներով գործառող համերաշխ ու արդար հասարակություն և երկիրը պաշտպանել արտաքին թշնամու ոտնձգություններից: Երզնկացու իրավաքաղաքական հայացքների ուշագրավ կողմերից է պետության (քաղաքի) մեջ իրավունքի և օրենքի գերակայության մասին դրույթը: Օրենքը, ըստ նրա, պետության (քաղաքի) հոգին է. ինչպես մարմինը մեռյալ է առանց հոգու, այնպես էլ «բնակիչք քաղաքի տկարք եւ աղքատք՝ մեռեալ են առանց իրաւանց աւրինացն: Քանզի բժիշկք աւգնեն հիւանդաց, իսկ իշխանք աւրինաւքն՝ զրկելոց»[28]: Օրինապահությունը երկրի կայունության ու բարգավաճման հիմնասյունն է, հետևաբար օրենքներին պետք է ենթարկվեն առանց բացառության բոլորը՝ թե՛ իշխողները և թե՛ հպատակները, թե՛ մեծահարուստները և թե՛ աղքատները: Ինչպես անգրագետ, դեղաբույսերի բուժիչ հատկություններին անտեղյակ բժիշկը բուժելու փոխարեն վնասում է հիվանդներին, այնպես էլ «իշխանք որք ոչ գիտեն զիրաւունս աւրինացն և կամ ո՛չ պահեն՝ վնասեն զարդարս եւ զանմեղս յանիրաւաց»[29]: Երզնկացին հայ իշխաններին խորհուրդ է տալիս խիստ լինել օրինազանցների, հատկապես մեծահարուստների հանդեպ, պատժել հանցագործներին ու երբեք չփորձել նրանց հետ մտերմանալ: Եթե իշխանը նման մարդկանց հանցագործությունները թաքցնի, ժամանակին չպատժի, ապա մյուսները ևս չարություն կգործեն՝ անպատիժ մնալու հույսով: Հակառակ դեպքում արժանավորներն ու բարեգործները կխեղճանան, կհիասթափվեն ու կխուսափեն իշխանության հետ շփվելուց ու համագործակցելուց, մինչդեռ չարագործները ձեռք կբերեն համարձակություն, այսինքն՝ կլկտիանան: Թագավորը չպետք է արդարներին նվաստացնի ու հասցնի աղաչողների մակարդակի, իսկ անիրավ ու անարդար մարդկանց ընդառաջի և հովանավորի: Այս իմաստով անգնահատելի է դատավորների դերը, որոնց նշանակում է թագավորը: Երզնկացու կարծիքով, դատավոր պետք է ընտրել այն մարդուն, ով իր խելքի տերն է, ով կարող է ինքնուրույն որոշումներ ընդունել, ով, լինելով լավ տնտեսվար, կարողանում է պահել իր տունն ու ընտանիքը: Առաջին հերթին դատավորը պետք է լինի անաչառ, անկա-

[28] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 159:
[29] Նույն տեղում:

շառ (կաշառք ասելով Երզնկացին չի հասկանում միայն ոսկին ու արծաթը, այլև տարբեր կարգի հովանավորություններ, շողոքորթություններ, գովաբանություններ)[30] ու արդարադատ, որովհետև անարդարությունը խոչընդոտում է սոցիալական համերաշխության հաստատումը, դառնում չարիք բոլորի համար: Երզնկացին հորդորում է ինչպես իշխաններին, այնպես էլ դատավորներին հատկապես չկաշառվել մեծահարուստներից ու նրանց երես չտալ, որովհետև համոզված է, որ ծուռ, անարդար դատաստանը խեղճացնում է սովորական բնակիչներին և էլ ավելի լկտիացնում մեծահարուստներին. «Անիրաւ և ծուռ դատաստանն սարդի ոստանի նման է, որ զճանճն և զմժեղն կարէ բռնել, պիծակ և մեղուն պատռեն և ելնեն: Նոյնպէս և անիրաւ աւրէնքն զաղքատն և զանկարն հաւնեցնեն, իսկ մեծամեծքն և հարուստն պատռեն և ի դուրս ելանեն և ոչ հնազանդին»[31]: Երզնկացին շեշտում է իրավունքի, օրինականության և բարոյականության միասնությունն ու փոխկապակցվածությունը՝ համոզված լինելով, որ օրինապահությունը, հավատքը, սուրբ մարդկանց աղոթքները և «ղորդ դատաստանը» երկրի անվտանգության, կայունության ու շենության հիմքն են:

Երզնկացին իշխանության գլխավոր խնդիրներից մեկը համարում է երկրի պաշտպանությունը արտաքին թշնամու ոտնձգություններից: Հայրենիքի ու ազգի ճակատագրով մտահոգված Երզնկացու համար դա հույժ կարևորության գործնական խնդիր էր, և պատահական չէ, որ այս հարցին նա հատկապես անդրադառնում է Կիլիկիայի արքունիքում արտասանած ճառում: Իշխանը պետք է լինի շրջահայաց, կարողանա վերահսկել իրավիճակը, ստույգ գնահատել իր ուժերն ու հնարավորությունները, հաշվի առնել իր առավելություններն ու թերությունները, իր մտքի ճկունությամբ կարողանա բարդ իրավիճակներից դուրս գալու ելք գտնել: Քննարկելով իշխանության վերաբերմունքը սրի հանդեպ՝ նա նախ նկատում է, որ իշխանը «սրովն սաստիկ երեւի եւ զորս սրովն խնամարկեալ պահէ», երկրորդ՝ պետք է իմանա և կարողանա երեք բան՝ ա) հակահարված տալ թշնամուն, բ) իմանա ներելու և սպանելու ժամանակը, գ) բարեմիտ ու չափավոր լինել իր ձեռքի տակ ընկածների ու գտնվողների հանդեպ: Ըստ այդմ՝ իշխաններին խորհուրդ է տալիս մշտապես պատրաստ լինել հակահարված տալու թշնամու ոտնձգություններին: Եթե թշնամին հարձակվում է երկրի վրա, ապա առանց ընկրկելու և ժամանակ կորցնելու հարկավոր է «համարձակապէս եւ հզաւրաբար զզաւրս կազմել եւ պատերազմել»: Բայց միայն համարձակությունը դեռևս հաջողության երաշխիք չէ. հարկավոր է հաշվի առնել բոլոր հանգամանքները, համեմատել թշնամու և սեփական

[30] Տե՛ս **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 208-209:

[31] Նույն տեղում, էջ 217:

ռազմական կարողությունները և դրանից հետո վճիռ կայացնել՝ պատերազմե՞լ, թե՞ հաշտության ուղիներ փնտրել: Եթե իշխանը համոզված է, որ թշնամու զորքը քանակապես մի քանի անգամ գերազանցում է իր զորքին և ավելի լավ է պատրաստված պատերազմին, քան ինքը, ապա նման դեպքում խելամիտ կլիներ ոչ թե պատերազմել, այլ բանակցությունների միջոցով կարգավորել հարաբերությունները և կնքել հաշտության պայմանագիր: Այլ խոսքով՝ թագավորը պետք է բոլոր միջոցները օգտագործի երկրի փրկության համար. «**Եւ ամենայնիւ հնարեսցի զփրկութիւն երկրի**: Եւ այսպէս, յամենայն իրս ընդ փոփոխման ժամանակին հնարել և զհետ գնալ ժամանակին»[32] (ընդգ. իմն է – Ս. Զ.): Կարծում եմ՝ սխալ կլիներ Երզնկացու այս իրատեսական միտքը մեկնաբանել մաքիավելիականության ոգով, որովհետև հայ իմաստասերի համար ամեն հարցում գերական ու գնահատման չափանիշը բարոյական օրենքներ են: Թեև Երզնկացին տեսականորեն չի ձգտում քաղաքականությունը դուրս բերել քրիստոնեական բարոյականության շրջանակներից, չի առաջնորդվում «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքով, այնուհանդերձ կարծում է, որ թագավորը պետք է լինի ճկուն, պետք է կարողանա օրինակ վերցնել օձի խորամանկությունից ու խորագիտությունից, կարողանա ըստ հարկի նվաստանալ ու բարձրանալ: Իրավացի է Է. Բաղդասարյանը, երբ Երզնկացու այս դիրքորոշումը գնահատում է իբրև արձագանք «այն ճկուն ու նենգ քաղաքականության, որ իրենց կրոնի թույլտվությամբ վարում էին մահմեդական իշխանություններն ու հոգևորականությունը»[33]: Ականատես լինելով Կիլիկիայի հայկական թագավորության վրա հարևան մահմեդական իշխանությունների ասպատակությունների ծանր հետևանքներին՝ Երզնկացին, մի կողմ դնելով չարին չդիմադրելու, թշնամուն սիրելու ավետարանական քարոզը և հետևելով աստվածաշնչյան Դավթի սաղմոսի մտքերին («Տէ՛ր, դատի՛ր նրանց, ովքեր դատում են ինձ, մարտնչի՛ր նրանց դեմ, ովքեր մարտնչում են իմ դեմ… Սուրդ հանի՛ր ընդդէմ իմ հալածիչների, վանի՛ր նրանց…», [Սաղմոս 34. 1, 3]), դիմում է Քրիստոսին. «Զաւրացոյ, Քրիստոս Աստուած, զաւրութեամբ խաչատարած բազկի քո զթագաւորս քրիստոնէից եւ զզաւրս նոցա, եւս առաւել զբարեպաշտ եւ զքրիստոսապսակ թագաւորն Հայոց, եւ աներեւոյթ ձեռին քո զաւրութեամբ դո՛ւ իսկ մարտիցես ընդ թշնամիսն խաչի քո եւ զաւրացուսցես զզաւրս քրիստոնէից. որպէս խոստացար լինել ընդ մեզ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի, զաւրութեամբ խաչի քո, Քրիստոս»[34]: Երզնկացին իր ճառերում, քարոզներում ու խրատներում մի կողմից մարդկանց կոչ է անում խաղաղության, փոխադարձ հար-

[32] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ.Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 159-160:
[33] **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 87:
[34] **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 106:

գանքի, ազգամիջյան ու կրոնական համերաշխության, բարիդրացիական հարաբերության, իսկ մյուս կողմից՝ քրիստոնյաներին ընդհանրապես և հայերին մասնավորապես հորդորում է միավորվել, մեջք մեջքի տալ ու ամուր պարիսպ կազմել, քանի որ միայն միասնական ուժերով հնարավոր է հաղթել թշնամիներին. «Եւ որպէս բազմութիւն զաւրաց քաջամարտիկ զինուորաց միաբանելոց դիւրաւ յաղթեն թշնամեացն, այնպէս եղբարցն բազմութիւն քաջ հաւատով և հաւասար սիրով՝ դիւրաւ յաղթեն սատանայի, և մեղսասէր դիւացն, և չար մարդկան, որք շարժին ի սատանայէ»[35]: Դա պատահական դիրքորոշում չէ, այլ բխում է Երզնկացու մարդասիրական ու լավատեսական աշխարհայացքի բովանդակությունից: Ինչպես նկատում է Է. Բաղդասարյանը, Երզնկացին, լինելով Հայ առաքելական եկեղեցու դավանանքի ջերմ պաշտպան, հանդուրժողականություն է ցուցաբերել քրիստոնեական քույր եկեղեցիների հանդեպ, կոչ արել «վերջ տալու եկեղեցիների հակառակությանը, որն առավելապես վերաբերում էր ծիսական արարողություններին, գտնելով, որ այդ ամենը հետևանք է տարբեր երկրներում քրիստոնեության ընդունման ժամանակի և պատմական, անգամ եղանակային հանգամանքների և որևէ չափով չի կարող առնչվել բուն հավատին առ Աստված»[36]:

Գնահատելով իշխանության ու կառավարման մասին Հովհաննես Պլուզ Երզնկացու ուսմունքը՝ կարող ենք առանձնացնել երկու կողմ. նախ՝ հարցադրումներ ու լուծումներ, որոնք առավելապես պատմական արժեք ունեն և հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմելու միջնադարյան մտածողության, միջնադարյան մարդկանց հուզող, հայոց ինքնությանն առնչվող հարցերի մասին, երկրորդ՝ հարցադրումներ և լուծումներ, որոնք տեսական արժեք են ներկայացնում և այսօր էլ չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը: Խոսքը վերաբերում է Երզնկացու կողմից առաջադրված պետության մեջ օրենքների ու իրավունքի գերակայության, իշխանության բնույթի և կառավարման գործընթացի մարդասիրական ուղղվածության, իմաստուն կառավարման, իշխանավորների բարոյական նկարագրի, մեծահարուստ ամբարտավանների ու չարագործների նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի, հասարակության մեջ սոցիալական, ազգամիջյան ու կրոնադավանական համերաշխության ու հանդուրժողականության հաստատմանը վերաբերող խնդիրների լուծմանը:

Բանալի բառեր – *միջնադար, իշխանություն, իմաստություն, սոցիալական հա-*

---

[35] **Հովհաննես Երզնկացի**, Սահման եւ կանոնք միաբանութեան եղբարց…, **Է. Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 223:

[36] **Է. Բաղդասարյան,** Հովհաննես Երզնկացին (համառոտ ակնարկ), **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 27, ծնթ.:

մերաշխություն, կառավարման սկզբունքներ, կառավարողների բարոյական նկարագիր, օրենք և իրավունք, քաղաքականություն և բարոյականություն

СЕЙРАН ЗАКАРЯН – ***Ованес Плуз Ерзнкаци о власти и управлении.*** – В статье рассмотрены социально-политические взгляды выдающегося мыслителя XIII века Ованеса Ерзнкаци. Верный философской манере средневековья, он увязывал воззрения на власть с этическими, метафизическими, богословскими, антропологическими вопросами. Ряд из них имеет преимущественно историческую ценность, позволяя составить довольно точное представление о средневековом мышлении и армянской идентичности, тогда как другие вопросы поныне не потеряли своей актуальности. Речь идёт, в частности, о приоритете законов и права, о гуманности власти, о мудрости и моральном облике правителей, их отношении к богатым и высокомерным злоумышленникам. Ованеса Ерзнкаци волновали также социальная, национальная и религиозная солидарность армян и создание в обществе атмосферы терпимости.

Ключевые слова: *средневековье, власть, мудрость, социальная солидарность, принципы правления, моральный облик правителей, закон и право, политика и мораль*

SEYRAN ZAKARYAN – ***Hovhannes Pluz Yerznkatsi on Power and Governance.*** – The article sheds light on the social-political views of the 13rd century prominent thinker Hovhannes Yerznkatsi pointing out that remaining faithful to the philosophical style of the Middle Ages, the Armenian thinker links the issues related to power and governance to metaphysical, theological, anthropological and ethical questions thus making an attempt to find solutions in their context. Analyzing Hovhannes Yerznkatsi's views on power and governance, the author reveals that firstly, there are some questions and solutions that mostly have a historical value while making it possible to have a comprehensive understanding of medieval mindset, the issues concerning medieval people and Armenian identity. Secondly, there are questions and solutions that have a theoretical value and they have not lost their actuality. It refers to the solution and suggestions related to such issues as rule of law, nature of power, humanitarian approach to governance processes, wise governance, moral characteristics of those who hold power, their attitude towards wealthy and arrogant intruders as well as issues related to establishment of social, ethnic and religious solidarity and tolerance.

Key words: *Middle Ages, power, governance, wisdom, social solidarity, principles of governance, moral characteristics of rulers, law and right, politics and morality*